

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, 765 էջ, գիրք՝ 2 ու. 07 կ.

XVII—XX դարերում, բացի մատենակից բառարաններից, երկրագնդի 45 հայագիտական կենտրոններում ու հայաշատ բնակավայրերում 280-ից ավելի հայագետներ հրատարակել են 320 բառարան (հայերեն բացատրական, արմատական կամ երկլեզվյան ու բազմալեզվյան՝ հայերենին առնչվելով)։

Գրախոսվող աշխատության մեջ վերլուծված և արժեքավորված է անցյալի հայ բառարանագրությունը՝ սկսած աստվածաշնչական բառական բացատրություններից մինչև Ֆրանչիսկո Ռիվոլայի հայերեն-լատիներեն տպագիր բառարանը (1621 թ.)։ Սակայն արդի գիտական ըմբռնմամբ հայ բառարանագրության սկիզբ հեղինակը համարում է Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեփաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» (I հատ.՝ 1749, II հատ.՝ 1769) դարակազմիկ բառարանը։ Մանկավարժական գործունեության ընթացքում զգալով հայերեն բառարանի անհրաժեշտությունը, Մխիթարյանները ընտրովիության սկզբունքով քարտադրել են այն ժամանակ իրենց մատչելի հայ մատենագրությունը՝ գլխավորապես ուղենալով հայոց լեզուն ձերբազատել անհարկի փոխառյալ բառերից և երևան հանել բնիկ հայերենը։ Այսպիսով, բառարանը հանձնարարում էր հայերեն բառը, դուրս գցում լեզվից թուրքական լեզուներից ներթափանցած բառերը, իսկ քրեականության մեջ՝ լատինաբանությունները։ Եվ այսպես նրանց հաջողվեց I հատորում տեղադրել 37000 բառ՝ գրաբար մատենագրության մեջ օգտագործված գերազանցապես հայերեն կամ հայացված բառեր։ Մխիթար Սեփաստացու բառարանի բերած մի նորությունն էլ այն էր, որ բառի հիմնական առումներից զատ տրված են բավական մեծ քանակությամբ ոճեր, կապակցություններ, կայուն դարձվածքներ, ինչպես՝ զլուխ դնել, զլուխ վերցնել, զլխե հանել, զլուխ կապել և այլն։

Գ. Գասպարյանը, մանրամասնորեն վերլուծելով այս բառարանը, իրավացիորեն գտնում է, որ «հին հայկազյան բառարանը փաստորեն հանդիսացավ հայ բառարանագրության այն հիմնաբարը, որի վրա հետագայում կազմվեցին հայե-

րեն բացատրական, թարգմանական և այլ բառարաններ, միաժամանակ այն դարձավ հայոց լեզվի բառային կազմի, քերականական ուսումնասիրությունների աղբյուր» (էջ 97)։

Հին հայկազյանի հեղինակները գիտեին, որ բառարանը հեռու է կատարյալ լինելուց, ահա ինչու II հատորի տպագրությունից միայն 15 տարի հետո՝ 1784 թ., հայագիտության 3 մեծ երախտավորներ՝ Դ. Ավետիքյանը, Խ. Սյուրմելյանը և Մ. Ավգերյանը վերստին ձեռնարկում են հայերեն բառարան ստեղծելու շնորհակալ գործին։ Վերստին քարտադրվում է ամբողջ հայ մատենագրությունը. դժբախտաբար, տպագրական դժվարություններից և մեծ ծախսերից խուսափելով, հայերենի բառապաշարը (մոտ 57000 բառ) ամփոփում են միայն երկու ստվար հատորների մեջ՝ «նոր բառգիրք հայկազեան լեզուի» վերնագրով (1836, Վենետիկ)։ Հայագիտության մեջ այս բառարանն ընդունված է անվանել նոր հայկազյան, որն ունեցել է նաև ամփոփ երկու հրատարակություններ, առանց վկայությունների, կրճատ՝ Առձեռն (երկրորդ հրատարակությունը 5000 բառով հարստացած)։

Այնուհետև աշխատության մեջ տարի առ տարի և հեղինակ առ հեղինակ ցույց է տրվում, որ հայ բառարանագրությունը գնալով հարստանում է նորանոր երկերով։ Բարձրարվեստ բառարանագրությունը հայագիտության մեջ ավանդույթ է դառնում։ Նոր հայկազյանին զուգընթաց կազմվում և հրատարակվում է Մանվել Զախջախյանի «Իտալերեն-հայերեն բառարանը» (Վենետիկ, 1804), ապա և «Հայ-իտալերեն բառարանը» (1837, Վենետիկ)։ Զախջախյանի այս վերջին աշխատանքի գիտական արժեքի մասին գաղափար կազմելու համար վկայակոչենք Հ. Աճառյանին. «Զախջախյանի Հայ-իտալերեն բառարանը մի պատվական գործ է և նույնիսկ իբր հայերեն բառարան շատ անգամ Հայկազյանից կարևոր է»։ Համեմատության մեջ դնելով այն նոր հայկազյանի հետ, գրքի հեղինակն իրավացիորեն դիտում է, որ Հայկազյանի գրական աղբյուրներից բացի Զախջախյանն իր բառարանում դրել է նաև նորակազմություններ և ինքնակերտ բառեր, որոնք հետագայում անցան այլ հայ բա-

ուարանների և տարածվեցին համայն հայութիան մեջ:

XIX դարի 80-ական թթ. հայ բառարանագրութիւն կենտրոն է դառնում Պոլիսը: Բաւական է նշել, որ 1880—1914 թթ. Պոլսում հրատարակվում և վերահրատարակվում են 49 բառարաններ: Հասկանալի է, որ եվրոպական ժողովուրդների հետ շփումը, եվրոպացի հեղինակների դասական գործերի թարգմանութիւնը անհրաժեշտ դարձրին ունենալ ինչպես ֆրանսերենին ու անգլերենին, այնպես էլ գերմաներենին ու իտալերենին, այլև թուրքերենին առնչվող հայ-օտար և օտար-հայ բառարաններ: Հեղինակը մեկ առ մեկ քննութիւն է ենթարկում այդ բառարանները, նշում նրանց առավելութիւններն ու թերութիւնները և որոշում նրանց տեղն ու դերը հայ բառարանագրութիւնի զարգացման գործում: Մասնավորապես կանգ առնելով Ա. Կոյլաւլյանի (Կոյլաւլ) «Բառգիրք գերմաներեն-հայերեն» (Պոլիս, 1882), Նորայր Բյուզանդացու (Պոլիս, 1884) և Գ. Լուսինյանի (Պոլիս, 1909) ֆրանսերեն-հայերեն բառարանների վրա, հեղինակը ճշտորեն նկատում է, որ միանգամայն սխալվեցին Ն. Բյուզանդացին և մանավանդ Գ. Լուսինյանը, երբ աշխարհաբարի հաղթանակի ժամանակաշրջանում իրենց բառարանի հայերեն բացատրութիւնների լեզուն դարձրին գրաբարը: Բարբախտաբար Ն. Բյուզանդացին «միջնադարյան հայ գրականութիւնից լույս աշխարհ բերեց 5000 բառ, որոնք բառարանում կրում են Ս (ստորին) նիշը և բազմաթիւ նոր բառեր ու առումներ, որոնց մեծ մասն այսօր մեր լեզվի սեփականութիւնն է դարձել»: այնուհետև «Ն. Բյուզանդացու բառարանի ամեն մի բառահոգւածը ստեղծագործական մի ամբողջ պատմութիւն է», — այսպես է գնահատված Ն. Բյուզանդացու վաստակը «Հայ բառարանագրութիւնի պատմութիւն» մեջ: Նշենք նաև, որ Բյուզանդացին զգալի թվով ֆրանսերեն գլխաբառեր է տրվել ֆրանսիացի աշխարհահռչակ բառարանագիր Լետրեին, որը դրանք ընդունել և զետեղել է ֆրանսերենի ակադեմիական բառարաններում: Իզուր չէ, որ Եղիա Տեմիրճիպաշյանը բացականչում է. «Ո՛չ, հասարակ բառագիր (իմա՛ բառարանագիր—Ս. Ա.) մը չէ նորայր. Լետրեին բառ սորվեցուց ու հայ լեզվին մեջ բառ ավելցուց՝ մութն հանելով կամ մտքն հանելով»:

Մեր դարի հայ բառարանագրութիւնի մեջ բացառիկ երևույթ է Ս. Բաբամաճյանի «Նոր բառագիրք հայերեն լեզվի» (Պոլիս, 1910) աշխարհաբարի բառարանը, որ պարունակում է մոտ 60000 բառահոգւած: Գ. Գասպարյանը, հանդիպադրելով Գաբամաճյանի բառարանը Առձեռնի հետ, ցույց է տալիս, որ Լ-լեալ հատվածում վեր-

ջինիս համեմատութիւնը այն ունի 49 բառ կամ մոտ 8 տոկոս ավելի, ընդ որում Գաբամաճյանը շատ անգամ հանրագիտական ծանոթութիւններ է տալիս:

Գրախոսվող աշխատութիւնի մեջ ընդարձակորեն քննվում է հայ-ուսերեն, ուս-հայերեն բառարանագրութիւնի պատմութիւնը: Պարզվում է, որ «Սովետական Միութիւնի ժողովուրդների բառարանագրութիւնի մեջ ուսերենին առնչված բառարանի առաջնութիւնը մեզ է պատկանում, ի դեմս Կ. Սարաֆյանի և Գ. Խաչատրյանի աշխատութիւնների» (էջ 104): Կ. Սարաֆյանի ուս-հայերեն, հայ-ուսերեն բառարանը լույս է տեսել 1788 թ. Պետերբուրգում: Ճիշտ է, բառարանում միայն մոտ 2000—2500 բառ կա, սակայն սկիզբը դրված էր: XIX դարում ուս-հայերեն բառարանագրութիւնը նոր մակարդակի է բարձրանում: Ի թիւս այլ բառարանագիրների ուս-հայերեն բառարան են կազմում Հ. Ալամդարյանը (9000 բառ, Մոսկվա, 1821) և Ռ. Պատկանյանը (Պետերբուրգ, 1870): Ճիշտ է, որ Դադրաշյանի բառարանը ո՛չ սկզբունքներով և ո՛չ էլ մանավանդ ծավալով չի կարելի համեմատել վերոհիշյալ բառարանների հետ, սակայն, այնուամենայնիվ, պատմական առումով նախորդները ևս հետաքրքրութիւն են ներկայացնում:

Աշխատութիւնի մեջ առանձին բաժին է հատկացված սփյուռքահայ բառարանագրութիւնը: «Գաղութահայութիւնն իր ազգային գոյութիւնը, իր լեզուն պահպանելու համար կազմել է շուրջ հինգ տասնյակ բառարանային աշխատութիւններ» (էջ 333): Հայ իրականութիւնի մեջ առաջին անգամ երևում են արաբերեն-հայերեն, իսպաներեն-հայերեն և բազմաթիւ այլ բառարաններ: «Եթե ժողովրդի մը լեզուն իր գոյութիւնի մեծագույն ազգակն է, շնորհիվ, որ բառարան մը միջնաբերդն է անոր դիմադրական ճիգին», — այսպես է հասկացել հայ բառարանի կոչումը արևմտահայ նոր Առձեռն բառարանի հեղինակ Վ. Գևորգյանը: Այդ բառարանների մեջ հայտնի է Մ. Հովհաննիսյանի հայերեն-ֆրանսերեն բառարանը (Պոլիս, 1925)՝ 50000 բառահոգւածով:

Այս բոլորից դուրս գրքում հանգամանորեն վերլուծված են նաև հանրագիտարանի փորձերը, զավառական, հոմանիշների բառարանները, հանպարանները, այլև օտարազգի բառերի և արհեստական լեզուների բառարանները:

Աշխատութիւնի մեջ հեղինակը կարևոր սկզբունքներ է առաջ քաշում արդի հայ բառարանագրութիւնի համար: «Տեղի-անտեղի չպետք է օգտագործել օտար բառերը. այդպիսիները պետք է ընդունել այն դեպքում միայն, երբ համապատասխան հայերեն կամ ավելի ճիշտ՝ տրվ-

յալ լեզվում, այդ գլխարանի համարժեք բառը չկա» (էջ 281): Տեսական այս ճիշտ դիրքերից ելնելով նա գնահատում է հայ բառարանագրության վերջին շրջանի մի շարք գործեր: Այսպես, 1945—1947 թթ. լույս տեսած և 1960 թ. վերահրատարակված «Հայ-ռուսերեն բառարանում» լրացումները կատարվեցին ոչ ի հաշիվ հայերենում ստեղծված և գործածական դարձած նորարանության, այլ օտար, նույնիսկ շատերի գոյությունը անդամ ուսերենում կասկածելի բաների» (էջ 469): Այդ նույն բառարանում տեղ են գտել նաև դուֆան, դուֆանչի, դուֆանդա, քալաֆ, խաբար, շարդառ, դալմադալ, նալ, նալբանդ, նոֆար, նարդիվան, նավդան, նադդ, դալլան, խաբարբգան, մուտառ, խասիաք և այլ բառեր, որոնցից, ինչպես հեղինակը ճիշտ կերպով նկատում է, «պետք է վերջնականապես ձևաքաջել»: Նույն այս ճիշտ դիրքերից է գնահատված Մ. Հարությունյանի «Բացատրական բառգիրքը» (Ալեքսանդրապոլ, 1912), որի մեջ բառարանագիրն իր ժամանակից ու իր ժողովրդից «առաջ ընկնելով» որպես հայերեն բառեր էր ներկայացրել անեսքեփա, բիմետալիզմ, կոլբերտիզմ, ադրեսանտ, ադորացիա և այլն:

«Բառարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս,— գրում է հեղինակը,— որ ամենալավագույն բառարաններն անգամ շրջելիս (ավելացնենք՝ մեխանիկորեն—Ս. Ա.) դադարում են ոչ միայն նույն որակն ունենալուց, այլև շատ դեպքերում դառնում են անարժեք և անօգտագործելի» (էջ 441): Անշուշտ, սրանով է բացատրվում Դադրաշյանի «Հայերեն-ռուսերեն բառարանի» ցածրարժեք լինելը նույն հեղինակի ուս-հայերեն բառարանի համեմատությամբ: Մեխանիկական մոտեցմամբ հայոց լեզվի բառարանների մեջ մեսրոպյան տառերով գրվել են փավաբազդություն, ժույա, տրյուկ, ուրյուկ, կուրկում և այլ բառեր, որոնք երբեք չեն կարող մերվել հայոց լեզվի մեջ: Մյուս կողմից՝ օտար բառի դիմաց պետք է հայերեն հասկանալի, բառակազմական տեսակետից դյուրընկալելի և բարձրճշտուն բառ դնել, մինչդեռ 1933 թ. լույս տեսած ուս-հայերեն բառարանում տեղ էին գտել կոդակաոֆ (линейка), երկաբակաոֆ (дрог), ծակամուտ (подхалим) և «նման հարևաններ», որոնք երբեք էլ չօգտագործվեցին մեր լեզվի մեջ: Թերի է և ուսերենի մասը, քննադատները ժամանակին նշել են конструктор, гидростанция, кинофикация, ленинец և այլ առավել գործածական բառերի բացակայության մասին այդ բառարանում:

Ինչ վերաբերում է հայերեն բացատրական բառարաններին, ապա հեղինակն առաջին

հերթին հարազատորեն պետք է արտացոլի իր ժամանակաշրջանի լեզվի բառապաշարը: Զէ՞ որ լեզուն ամեն օր, ամեն ժամ կապի մեջ է հասարակական առաջընթացի հետ, նրանով և նրա մեջ է արտացոլվում հասարակական կյանքը: Այսպես՝ հեղինակի հաշվումներով ավելի հիմքով Առձեռն բառարանին (1865, Վենետիկ) ծանոթ են միայն երկու բառ (ածխակեզ և ածխանալ), Գարամաճյանին (1910, Պոլիս)՝ 12, վերևում հիշատակված հայ-ռուսերեն բառարանին՝ 27, իսկ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի պատրաստած հայ-ռուսերեն բառարանին՝ 69: Սա միանգամայն հասկանալի է. Սովետական Միությունը զարգացած ածխարդյունաբերություն ունեցող երկիր է, ուսերենում տրեստեսությունն այդ բնագավառի հետ կապված կան տասնյակ բառեր, որոնք բացատրությամբ իրենց արտացոլումը պետք է գրտենեն հայերենում: Այս դիրքերից հեղինակը միանգամայն արդարացիորեն քննադատում է Ստ. Մալխասյանցին, որի հայերեն բացատրական բառարանը թեև Հ. Աճառյանի «Արմատականից» մոտ մեկ տասնամյակ հետո լույս տեսավ, սակայն շուներ դասաբաշխում, դասաբաշխություն, դասացուցակ, անցուդ, բաժնետոմս, առագաստավոր, դրոշակակալ, դրոշակավոր, դասամատյան, գրչագրական և այլ բառեր, որոնք, որպես նորակերտումներ, Աճառյանն արդեն իսկ ընդունել և զետեղել էր իր բառարանում համապատասխան արմատների տակ: Հեղինակը, մեկ առ մեկ վերլուծելով սովետահայ բառարանագրության ինչպես վերևի, այնպես էլ մյուս մեծ թեք փոքր գործերը, ըստ արժանվույն գնահատում է դրանք՝ նշելով այն խոշոր դերը, որ վիճակվեց սովետահայ լեզվաբանությանն ու բառարանագրությանը վերջին հիսուն տարում: Ըստ հեղինակի կազմած «Հայ բառարանագրության աշխարհագրական տեղաբաշխման», միայն վերջին հիսուն տարում երևանում լույս է տեսել 63 բառարան: Վերջին 50 տարվա ընթացքում երևանում հրատարակված բառարանները թվով ավելի շատ են, քան Վենետիկում և Պոլսում (առանձին վերցրած) մեկ և կես դարի ընթացքում հրատարակված բառարանները (Պոլիս՝ 55, Վենետիկ՝ 47):

Սովետահայ բառարանագրության անբաժանելի մասն են կազմում նաև մասնագիտական բառարանները, այսպես կոչված տերմինարանները: Հայաստանում անգրագիտության վերացումը, գիտության, արդյունաբերության, տեխնիկայի նորանոր բնագավառների երևան գալը մեր իրականության մեջ անհրաժեշտություն առաջ բերեցին հայոց լեզվով անվանում տալ այս բոլորին, և մասնագիտական բառարաններ կազմելը ոչ միայն լեզվաբանական, այլ նաև պետա-

կան կարևորություն ունեցող բնագավառ դարձավ: Գ. Գասպարյանը ըստ արժանվույն գնահատում է հայերեն տերմինաբանական բառարանները՝ ցույց տալով այն մեծ ծառայությունը, որ բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանցը, Մ. Արեղյանը, Վ. Արծրունին և շատ ուրիշ հայագետներ ու տարբեր մասնագիտությունների մարդիկ մատուցեցին մեր գիտությանն ու հասարակական կյանքին՝ կազմելով կամ թարգմանելով երեք տասնյակից ավելի բառարաններ: Առանձնապես արժեքավոր են Մ. Արեղյանի «Ռուս-հայերեն ռազմական բառարանը» (1925), Վ. Արծրունու «Ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարանը» (1924): Նկատի ունենալով տվյալ գիտությունների գծով անցյալի հայերեն տերմինները, նրանք կյանքի վերակոչեցին և կերտեցին հարյուրավոր և հազարավոր նոր բառեր, որոնք հայ մասնագիտական լեզվամտածողության ընտելացրին սերունդներին: Այս բառարանների միջոցով մեր իրականության մեջ տարածվեցին ժամկետ (срок), պահածո (консерв), հաստիֆ (штат), համհարգ (адъютант), ականջացավ (otodynia), ականջածորանի (otorrhoea), ապա և՛ շուրջկալ, հրաձգարան, տարկետում և հարյուրավոր այլ բառեր, որոնք այսօր մեր բառապաշարի կենսունակ բառերից են:

Աշխատության մեջ տեղ-տեղ հեղինակն անում է բանասիրական ու հայագիտական իրավացի դիտողություններ ու ճշտումներ. այսպես՝ Հր. Աճառյանն իր «Արմատականում» որպես տարբեր արմատներ է ընդունել արեղայ և աղեղայ. մինչդեռ, ինչպես նշում է Գ. Գասպարյանը, դեռևս ՀՀԲ-ին ծանոթ է այս բառի սխալ գրություն լինելը (...այլև ըստ տառիցն, որք խոնափնդոր են եղեալ, որպես Արեղայն գրի աղեղայ, անցուցեալ զնա ի կարգս ղատին» (էջ 43): Նույն հեղինակը վերոհիշյալ աշխատության մեջ գազօֆիլակում «գանձանակ», զալք «հինավոր», զաղգաղ «անիվ» վերագրում է Երեմիայի բառարանին, մինչդեռ պարզվում է, որ դրանք ունի Ոսկան Երևանցին (1666):

Հայագիտական մի շարք աշխատություններում սխալ կերպով վկայված է, որ Առձեռնի

2-րդ հրատարակությունը (1865, Վենետիկ) իրր Մ. Ավգերյանն է կատարել, մինչդեռ, ինչպես պարզում է Գ. Գասպարյանը, դա բացահայտ թյուրիմացություն է: Մ. Ավգերյանը 1854 թ. կնքել էր իր մահկանացուն: Այս հրատարակությունը պատկանում է Գր. Ծելալյանին, որը և բառարանը հարստացրել է 5000 բառով: Կուզենայինք հեղինակի ուշադրությունը հրավիրել հետևյալ մի քանի դիտողությունների վրա. Իրավացի չէ Գ. Գասպարյանը, երբ գրում է, որ «Ամիրզովլաթը իրավամբ համարվում է հայ բժշկության հայրը: Նա առաջինն է, որ թարգմանաբար ու ինքնուրույն գործեր ստեղծեց բժշկական գիտական գրականության և բառարանագրության մեջ» (էջ 427): Իսկ Մխիթար Հերացի^ն, որ մոտավորապես 3 դար առաջ է ապրել Ամիրզովլաթից, գրել համաշխարհային ճանաչման արժանացած «Ջերմանց մխիթարությունը»:

Օտար բառերի ուղղագրությունը աշխատության մեջ հեռու է բավարար լինելուց, հաճախ լատինականի փոխարեն դրված է ռուսերեն տառ, շփոթված են գոյականի սեռի ցուցիչները, ֆրանսերենը շփոթված է անգլերենի հետ և այլն, և այլն: Ահա այդ կարգի մի քանի սխալներ. Thesaurus linguae armeniacae (էջ 65), armeno-latinum (նույն տեղում), a vocabulary of words u sed (էջ 200), Petit Larouss (էջ 215), des Lettes (էջ 246), La dialecte (էջ 348), Repertoire etymologique de l'Armenian (էջ 382), Societé te philomatique (էջ 435) և այլն:

Հայ գիրքն այսօր, մանավանդ գրախոսվող աշխատանքի բնույթի երկասիրությունները, դրվում են նաև օտար հայագետների սեղանին, ուստի անսխալ տպագրությունն ազգային արժանապատվության հարց է:

Ամփոփենք. նշված և մի քանի այլ կարգի թերությունները չեն կարող ստվեր գցել Գ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» աշխատության վրա, ահա ինչու նա արժանի է գիտական հետաքրքրության և գնահատման:

Ս. ԱՆԹՈՍՅԱՆ